

Ջահայեաց պարտէր ըլլալ Կաթողիկոսը այնպիսի՝ միջավայրի մը մէջ, ուր մեծամասնութիւնը հակակաթողիկէ ըլլալով, ինք չէր կարող իր դաւանանքը պարտադրել ոչ իսկ իր քարտուղարին, մի՛ դուցէ զրպարտութիւններով եւ կաշառքով զինք պահընկէց ընէին:

Հաւատոյ Տարածման Ս. Ժողովը աւելի իրազեկ էր Կաթողիկոսին կացութեան. այս պատճառաւ, ան ա'յսպէս կը պատասխանէր Հելլոպոլսոյ Եպիսկոպոսին տարակոյսներուն. «Բա՛ւ է որ Պատրիարքը՝ Նորին Սրբուքեան գրած ըլլայ նամակ մը, յարում ինքզինք կաթողիկէ կը դաւանի» (13):

1664ի Հոկտեմբերին Երեւանի մէջ կայացած ժողովակէն յետոյ, որուն մասնակցած են բազմաթիւ եպիսկոպոսներ ու վարդապետներ, «Կարկուտ» յորջորջուած Ռնովորիոս վարդապետը 1665ի Մարտին ամբաստանազիր մը կը ներկայացնէ Եղիազար Հակաթոռ Կաթողիկոսին, ընդդէմ Յակոբ Զուղայեցիի, զոր կ'այսպնէ նաեւ իբրեւ քաղկեդոնական կամ կաթողիկէ. «Յայտնապէս զաղանդ քաղկեդոնիկ երկարնակացն ընկալեալ եւ զնոյն երկարնակ դաւանութիւնն զըրով եւ կնքով իւրով առաքեաց առ Պապն Հռոմայ» (14):

Նոյնպէս Ղլըմպիկ Սահակ Վարդապետը

(13) Sac. Gregorio Petrowicz, Անդ 199:

(14) Սիոն, Նոր Շրջան, է. Տարի, 1933, Մայիս, Թիւ 5. Դիւան Ս. Յակոբայ, էջ 151-153: